

Հաստատված է

**ՇՀԱՊՁԲ-ՏԿԱԻՆ-16-1-15/2-50** ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի  
հանձնաժողովի

2016թ. հունվարի 20-ի թիվ 1 որոշմամբ

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ր Ա Վ Ե Ր**

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ  
ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ**

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու)՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպել է ՇՀԱՊՁԲ-ՏԿԱԻՆ-16-1-15/2-50 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը :

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ), ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին կարող են մասնակցել սահմանված կարգով <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև **27. 01. 2016թ., ժամը 17:30-ը**: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել **էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրվա՝ 01. 02. 2016թ., ժամը 11:00-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:**

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

ՀՀ ՏԿԱԻՆ էլեկտրոնային փոստի հասցեն է՝ [piu@mes.am](mailto:piu@mes.am),

**ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Չափման միավորը	Տեխնիկական բնութագիրը
1.	Ընտանի կենդանիների կեր	կգ	<p>Լիարժեք չոր կեր բոլոր ցեղատեսակների հասուն շների համար, տավարի մսով, բրնձով և բանջարեղենով: Բաղադրությունը- եգիպտացորեն, բրինձ, հավի ալյուր, եգիպտացորենի գլյուտեն, մսի ալյուր ,այդ թվում տավարի միս (նվազագույնը 4%) ճակնդեղի չեչ, գազար (նվազագույնը 4%), արևածաղկի ձեթ , կենդանական ճարպեր, վիտամիններ և հանքանյութեր: Սննդային արժեքը (100գ), սպիտակուցներ՝ 22գ, ճարպեր՝ 11գ, մոխիր՝ 7գ: Թաղանթանյութ՝5գ, խոնավությունը՝ 10գ-ից ոչ ավել, կալցիում՝ 1.0գ, ֆոսֆոր՝ 0.9գ, նատրիում՝ 0.3գ, կալիում՝ 0.58գ, մագնիում՝ 0.1գ, ցինկ՝ 18մգ, պղինձ՝1.5մգ, վիտամին A 1500ՄՄ, վիտամին E 30մգ, վիտամին D3՝ 120ՄՄ, ինչպես նաև վիտամիններ B2, B4, B5, B12 նիացին, օմեգա-6, օմեգա-3 պոլիչիագեցած ճարպաթթուներ: Էներգետիկ արժեքը(100գ) 355կկալ,պահպանել +4C-ից 35C ջերմաստիճանում և օդի հարաբերական խոնավության 75%-ից ոչ ավել պայմաններում:</p>

\*Օանոթություն- ապրանքը պետք է լինի գործարանային արտադրության:

**ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ  
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

«Ն դրամ»

Հ / Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2016թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Ընտանի կենդանիների կեր	կգ		335		335		335		345		1350	
Ընդամենը				X		X		X		X		X	

**ՍՆՆ ԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ  
ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	իվրիս	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Գյուղատնտեսական ապրանքներ		24.8 %	24.8 %	49.6 %	49.6 %	49.6 %	74.4 %	74.4 %	74.4 %	100 %	100 %	100 %	<b>100 %</b>

\* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով